ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

06 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ, N 217 -Ա

ՕՁՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 168-րդ հոդվածի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 1-ին մասի ա կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասի՝

Հիմք ընդունելով Հարություն Գալստյանի 03/10/2022 թվականի դիմումը.

որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարան համայնքային կառավարչական հիմնարկի աշխատակազմի քարտուղար Հարություն Հովհաննեսի Գալստյանին ազատել զբաղեցրած պաշտոնից:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարան համայնքային կառավարչական հիմնարկի աշխատակազմի քարտուղար Հարություն Հովհաննեսի Գալստյանին աշխատանքից ազատված համարել 2022 թվականի հոկտեմբերի 7-ից:

3.Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով Հարություն Գալստյանի հետ, հասանելիք չօգտագործված արձակուրդի համար, որը կազմում է 22 օր կատարել լրիվ վերջնահաշվարկ:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

06 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ, N 218 -Ա

ՕՁՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՆԱԻՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարան համայնքային կառավարչական հիմնարկի աշխատակազմի քարտուղարի պարտականությունները 2022 թվականի հոկտեմբերի 7-ից վերապահել աշխատակազմի գլխավոր մասնագետ Նաիրա Վարդանյանին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2022թ., հոկտեմբերի 6
Լոռու մարզ, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

06 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ, N 219-Ա

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3.3-րդ և 4-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 129 և 130 հոդվածներով, հաշվի առնելով, որ «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հավելվածի 2.5-րդ մասի համաձայն Օձուն համայնքը վերակազմակերպվել է այլ վարչատարածքային միավորի, հիմք ընդունելով թիվ 24 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 02-ի թիվ 15-Ա որոշումը՝

որոշում եմ.

1.2022 թվականի հոկտեմբերի 07-ից դադարեցնել Օձուն համայնքի ղեկավար՝ Արսեն Տիտանյանի, լիազորությունները:

2.Աշխատակազմի գլխավոր մասնագետ-հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, Արսեն Տիտանյանի հետ, հասանելիք չօգտագործված արձակուրդի համար, որը կազմում է 5 ամիս 24 օր, կատարել լրիվ վերջնահաշվարկ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ